Ը. ՎԻՊԱԿԱՆ ԵՎ ԱՇՈՒՂԱԿԱՆ ԵՐԳԵՐ

1. ԳԱՑՆՔ, ՏԵՍՆՔ

Գացեք, տեսեք՝ ո՛րն է կերի զէծ,
Գացին, տեսան՝ գելն է կերի զէծ։
Գելն էր իծուն,
Էծն էր տիկուն,
Տիկն արևուն,
Իգ Վարագա՝
Վրես գիկա.
Հալա՜լ է, վո՛լա, հալա՜լ է։
Հալա՜լ է, բի՛լա, հալա՜լ է։

Գացեք, տեսեք՝ որ՛ն է կերի գգել,
Գացին տեսան՝ արջն էր կերի զգել։
Արջն էր գիլուն,
Գելն էր իծուն,
Էծն էր տիկուն,
Տիկն արևուն,
Իգ Վարագա՝
Վրես գիկա.
Հալա՜լ է, վո՛լա, հալա՜լ է,
Հալա՜լ է, բի՛լա, հալա՜լ է։

Գացեք, տեսեք՝ ո՛րն է կերի զարջ,
Գացին, տեսան՝ վագրն էր կերի զարջ։
Վագրն էր արջուն,
Արջն էր գիլուն,
Գելն էր իծուն,
Էծն էր տիկուն,
Տիկն արևուն,
Իգ Վարագա՝
Վրես գիկա.
Հալա՜լ է, վո՛լա, հալա՜լ է,
Հալա՜լ է, բի՛լա, հալա՜լ է։

Գացեք, տեսեք՝ ո՛րն է կերի զվագր,
Գացին, տեսան՝ թուրն էր կերի զվագր։
Թուրն էր վագրուն,
Վագրն էր արջուն,
Արջն էր գիլուն,
Գելն էր իծուն,
Էծն էր տիկուն,
Տիկն արևուն,
Իգ Վարագա՝
Վրես գիկա.
Հալա՜լ է, վո՛լտ, հալա՜լ է,
Հալա՜լ է, բի՛լա, հալա՜լ է։

Գացեք տեսեք՝ ո՛րն է կերի զթուր,
Գացին տեսան՝ ժանգն էր կերի զթուր։
Ժանգն էր թրուն,
Թուրն էր վագրուն,
Վագրն էր արջուն,
Արջն էր գիլուն,
Գելն էր իծուն,
Էծն էր տիկուն,
Տիկն արևուն,
Իգ Վարագա՝
Վրես գիկա.
Հալա՜լ է, վո՛լտ, հալա՜լ է,
Հալա՜լ է, բի՛լա, հալա՜լ է։

Գացեք, տեսեք՝ ո՛րն է կերի զժանգ,
Գացին տեսան՝ եզն էր կերի զժանգ։
Եզն էր ժանգուն,
Ժանգն էր թրուն,
Թուրն էր վագրուն,
Վագրն էր արջուն,
Արջն էր գիլուն,
Գելն էր իծուն,
Էծն էր տիկուն,
Տիկն արևուն,
Իգ Վարագա՝
Վրես գիկա.
Հալա՜լ է, վո՛լա, հալա՜լ է,
Հալա՜լ է, բի՛լա, հալա՜լ է։

Գացեք, տեսեք՝ ո՛րն է կերի զեղ,
Գացին, տեսան՝ մուկն էր կերի զեղ։

Մուկն էր եղուն,
Եղն էր ժանգուն,
Ժանգն էր թրուն,
Թուրն էր վագրուն,
Վագրն էր արջուն,
Արջն էր գիլուն,
Գելն էր իծուն,
Էծն էր տիկուն,
Տիկն արևուն,
Իգ Վարագա,
Վրես գիկա.
Հալա՜լ է, վո՛լա, հալա՜լ է,
Հալա՜լ է, ի՛լա, հալա՜լ է։

Գացեք, տեսեք՝ ո՛րն է կերի զմուկ,
Գացին տեսան՝ կատուն էր կերի զմուկ։
Կատուն էր մկուն,
Մուկն էր եղուն,
Եղն էր ժանգուն,
Ժանգն էր թրուն,
Թուրն էր վագրուն,
Վագրն էր արջուն,
Արջն էր գիլուն,
Գելն էր իծուն,
Էծն էր տիկուն,
Տիկն արևուն,
Իգ Վարագա՝
Վրես գիկա.
Հալա՜լ է, վո՛լա, հալա՜լ է,
հալա՜լ է, ի՛լա, հալա՜լ է։

2. ԼՎԵՐՆ ԷԿԱՆ

Լվերն էկան կառան-կառան,
Քշին, լցվան պառվու մառան,
Թորկին զոտներ, վզին թառան.
Հավա՜ր լվեր,
Մատա՜թ լվեր,
Սուր մոթրներ,
Բարակ ճվեր։

Լվերն էկան բոլուկ-բոլուկ,
Թռան մտան տերտրոջ մուրուք,
Հարամ էրին բուռվառ ու խունկ.
Հավա՜ր լվեր,
Մատա՜թ լվեր,
Սուր մոթրներ,
Բարակ ճվեր։

Լվերն էկան կպան մեր ջան,
Հըտ խածելուն կը խրվենջան,
Ջրն թողի օր քիչ մե ննջամ։
Հավա՜ր լվեր,
Մատա՜թ լվեր,
Սուր մոթրներ,
Բարակ ճվեր։

Լվերն էկան վռազ, ոտ-ոտ,
Քշին յառեջ, ջանի կարոտ,
Էլ չը թողին գեշ ու խորոտ.
Հավա՜ր լվեր,
Մատա՜թ լվեր,
Սուր մոթրներ,
Բարակ ճվեր։

Լվերն էկան հասան Փրխուս,
Կերան-թափին պուտուկ մե խուս,
Էս ի՞նչ զուլում բերին գլխուս.
Հավա՜ր լվեր,
Մատա՜թ լվեր,
Սուր մոթրներ,
Բարակ ճվեր։

Լվերն էկան գիշեր-կեսին,
Թափվան մըտ քունջ հարս ու փեսին,
Ջը թողին օր անուշ խոսին.
Հավա՜ր լվեր,
Մատա՜թ լվեր,
Սուր մոթրներ,
Բարակ ճվեր։

Լվերն էկան խաթար-խաթար,
Էղան . . . . . .
Էլ չը թողին քուն ու սթար.
Հավա՜ր լվեր,
Մատա՜թ լվեր,
Սուր մոթրներ,
Բարակ ճվեր։

Լվերն էկան մտան Տրտուպ,
Հասան Թեղուտ, լցվան ի Կուպ,
Յե՛լեք առնինք թվանք ու թոփ.
Հավա՜ր լվեր,
Մատա՜թ լվեր,
Սուր մոթրներ,
Բարակ ճվեր։

Լվերն էկան Մուշ-Բուլանուխ,
Էնոնց դարդեն մոլրանք մեր մուխ,
Կերան զմեր ճուռ ու գլուխ.
Հավա՜ր լվեր,
Մատա՜թ լվեր,
Սուր մոթրներ,
Բարակ ճվեր։

3. ԿԱՏՈՒՆ ՈՒ ՄՈՒԿ

Կատուն օր մը ըսեց մկան.
—Բարև՜, բարև՜, հին բարեկամ,

Դու թանկ իս բընց դեղին օսկին,
Կարոտ իմ քու անուշ խոսքին.
Արի՛ իմ տուն՝
Խանըմ-խաթուն.
Զրգերդ էրթան
Ի վարժատուն։

Մուկն ըսեց.— Ա՜յ դու կեղծավոր,
Մեկին սանհեր, մեկին քավոր,
Մեկին քեռի, յա՛ խնամի,
Ո՞ր մեկն ըսիմ օր թամըմի.
Սուտ խոսելով՝
Խարիս յըմնուն,
Քա՛շվի ղնա
Քու տուն ու բուն։

Կատուն ըսեց.— Թե մոտսի դաս՝
Բան չը դտնիս էնտեղ պակաս,
Հացի դիղրանք, միս՝ հին ու նոր.
Աստրծուն փառք կիտանք յըմնօր.
Խլրխդ իշկե,
Համալ չէղնի՜,
Անոթնե՛ իս
Ցմքի-դեղնի։

Մուկն ըսեց.— Դու շատ մը՛ փչի,
Ցեղով սովոր ինք շատ քչի.
Օր մ՝ անոթի, օր մե փոր-կուշտ,
Համա քու պես դող չինք ու փուշա.
Քու ցեղ դինա՜մ,
Սո՛ւտ կը խոսաս.
Փշուր տեսար՝
Կը վսվսաս։

Կատուն ըսեց.—Յոտդի պադիմ,
Մեծ ջարահ իս ու մեծ հեքիմ,
Ա՛րի խղճա մեր աղդ ու ցեղ,
Էս բոռ աչքիս էրե մեկ դեղ.
Ես լե մեղք իմ,
Ճժկընու տեր,
Դրախտ յիջնան
Քու հեր ու մեր։

Մուկն ըսեց.—Ա՜յ դել ու դաղան,
Մառնի վազան, թունդրի նազան,
Քոռ չիս, համա զուզիմ քոռնաս,
Դու մթան մեջ բան չը տեսնաս.
Ուր մնաց լուս՝
Էրեկ-ցերեկ.
Մեկ էս խալբի՜ն
Անկաչ էրեք։

Կատուն ըսեց.—Զար մը՛ խոսա,
Դիշերիկսի էրազ տեսա՝
Ես դարձեր ենք քըզի աներ,
Դու դարձեր էր ընձի փեսա.
Ցեղով-տեղով
Թևխաղ քաշեն,
Աշխար թափեր
Մեր թամաշեն։

Մուկն ըսեց.—Դու սուտ մը՛ խոսա,
Թե գառն էղավ զիլոն փեսա,
Ես լե փեսա կէղնիմ կատվին.
Տա՛, սրունքաեր, քըզի տվին
Հարուր օսկի,
Մուկ օր տեսար՝
Զօսկին թորկիր,
Մկան հասար։

Կատուն ըսեց.—Սունչդի սըսկի՛,
Աղեկութեն չընցնա ըսկի.
Ես՝ ի՛նչ կըսիմ, էն ի՛նչ կըսե,
Անկաչ է պետք՝ օյութե լսե.
Դե՛, դու դինաս,
Թե չիդաս յիս՝
Ցետև—յառեջ
Կը փոշմընիս։

Մուկն ըսեց.—Քու բնիկ վերան,
Զուր ե՞ր բանաս լպոոտ բերան.
Ցըմնօր գողնաս սեր ու մերան,
Լարին քըզի՝ հանին դերան.
Ցելնաս յատիր,
Կպիս պատին,
Ցուր օր յընկնաս՝
Վըր չորս թաթին։

Կատուն ըսեց.—Ծակի գոնեն
Դո՛ւս արի, չըմ թորկի բոնեն,
Ես՝ քու աներ, դու՝ իմ փեսեն,
Դու մը՛ լսի մարդոց խսեն.
Ես քե ախպեր,
Դու՝ ընձի քուր,
Թե վնաս տամ՝
Զուխտ աչքսի կուր։

Մուկն ըսեց.—Դե, հե՛րք է, հե՛րք է,
Գնա թան ու մածուն լըկե.
Ցելնաս հավեն, պատիս թավեն,
Զը պրծընաս փորուդ ցավեն.
Ըսեց մուկիկ,
Փախավ ուր ծակ.
Կատուն մնաց
Զոր պատի տակ։

4. ԿԱՐՈՍ ԽԱՉ

Օրշնյալ է ասավածըն բարերար,
Օրշնյալ է տերն—Հիսուս-Քրիստոս,
Օրշնյալ է խաչ ու խաչապաշտ։
Կարոս՝ խաչն է Հայոց աղգին.
Մատա՜ղ էղնիմ Կարոս խաչին։

Լուսն էր բացվի, լուսն ի բարի,
Քառասուն հոտաղ ժողվան էկան,
Էկան կանան մըջ լեն դաշտին,
Բող մե քաղին, խաչ շինեցին,
Կանան ի դեմ խաչ հանեցին,
Ծնդրիկ զարկին, աղոթեցին,
Վերև աստծու հրամանքով՝
Բողե խաչն էր՝ դառձավ օսկի,
Ճրըստալեն թռավ դնաց,
Մտավ ի մեջ Կարոս ածվին,
Գիշեր՝ լուս էր Կարոս ածվին,
Ցերեկ՝ հով էր Կարոս ածվին։
Մատա՜ղ էղնիմ Կարոս խաչին։

Խարար տարան դեղի ռեսին,
Ռեսն էր՝ ժողվեց ժողովրդին,
Հըտ տերտերոջ ու տիրացվին՝
Գացին ի յոաք Կարոս խաչին։
Կարոս խաչն էր՝ թռավ էկավ
Փտուք բաղմավ դիրկ տերաբրին.
—Տեր օղորմյա՜, տեր օղորմյա՜,
Տեր օղորմյա՜ մեղավորին,
Համբուր տվեց Կարոս խաչին,
Վերուց դրեց վըր ուր գլխին,
Տարավ ղխաչ ժամ-խորանին,
Գիշեր՝ լուս կիտեր մըջ ժամին,
Ցերեկ՝ հով կիտեր վըր ժամին։
Մատա՜ղ էղնիմ Կարոս խաչին։

Խարար տարան Ալի աղին.
—Խաչ մե յելի Հայոց աղգին,
Գիշեր՝ լուս կիտա մըջ ժամին,
Ցերեկ՝ հով կիտա վըր ժամին։
Յընկնավորավ, կատղավ Ալին,
Ըսեց լամուկ-խուլամներին.
—Գացե՛ք, բերեք Կարոս խաչին,
Էն ույմիշ չէ՛ Հայոց աղգին,
Էն ույմիշ է մըջ իմ քոշկին,
Գիշեր՝ լուս տա մըջ իմ քոշկին,
Ցերեկ՝ հով տա վըր իմ քոշկին։

Հավարն յընկավ գեղի ռեսին,
Ռեսն էր յելավ գնաց աղին,
Խուրջիմ՝ օսկի դրեց յառեջ,
Խուրջիմ՝ արծաթ դրեց յառեջ,
Զոքավ, ըսեց Ալի աղին.
—Խնդիրք կէնիմ ես քու յոտաց,
Խնդիրք կէնիմ քու խանըմին,
Խնդիրք կէնիմ քու ճժկընին,
Զեռք մը՛ զարկի Կարոս խաչին,
Խաչն ի պատիվ՝ Հայոց աղգին։
Մատա՜ղ էղնիմ Կարոս խաչին։

Լսեց Ալին, կատղավ Ալին,
Ցելավ գնաց գուռն ի ժամին,
Մտավ խորան աղա Ալին,
Ուղեց ձեռ տա Կարոս խաչին,
Ձեռնի զարկեց Կարոս խաչին՝
Ձեռնի քաշվավ կպավ փիջին,
Ուղեց յոտքել վըր խորանին,
Յոտքն ի դրեց վըր խորանին՝
Յոտքնի կպավ մեկել յոտքին.
Կատղավ Ալին, կատղավ ուր ձին,
Գառձավ կերավ ուր ձիու ցին։
Մատա՜ղ էղնիմ Կարոս խաչին։

Դառձավ էկավ աղա Ալին,
Ցելավ կանավ վըր քոշկ-ըրջին,
Ձեննի թալեց մըջ մեծ քաղքին.
—Խաչ մե յելի Հայոց աղգին,
Գիշեր՝ լուս կիտա մըջ ժամին,
Ցերեկ՝ հով կիտա վըր ժամին,
Էն ույմիշ չէ՛ Հայոց աղգին,
Էն ույմիշ է մըջ իմ բոշկին,
Գիշեր՝ լուս տա մըջ իմ քոշկին,
Ցերեկ՝ հով տա վըր իմ քոշկին,
Գացե՛ք բերեր Կարոս խաչին։

Ըսեց. յելան խոշուն կատղին,
Հուշում տվին Հայոց աղգին,
Ուղեց փախցու Կարոս խաչին՝
Խավան յիրար, յիրար, զարկին.
Յետին դառձավ վըր յաոջընին,
Յառջին դառձավ վըր յետինին,
Ջանդակ դիղվավ հասավ բերդին,
Արնի դեսեր գոչ-գոչ գացին։
Մատա՜ղ էղնիմ Կարոս խաչին։

Մեկն էր պրծի՝ էկավ աղին,
Էկավ յընկավ յոտքն ուր աղին,
Ըսեց.—Ա՛ղա, վա՜յ մեր հալին,
Զընք մոտեցի մենք դրա ժամին,
Զընք ձեռ տվի Կարոս խաչին,
Խաղաբ յընկավ մըջ խոշունին.
Յետին գառձավ վըր յասջընին,

Յաւջին զառնալ վըր յետինին,
Խաւվան յիրար, դիրար ջարդին,
Ջանդակ դիղվալ, հասալ բերդին,
Արնի դետեր դոչ-դոչ գացին։

Ջարդանդ դարկեց Ալի աղին,
Ջարդանդ դարկեց, յընկալ չոքին,
—Դացե՛ք, ըսեք Հայոց աղդին,
Խուլամ կէղնիմ Կարոս խաչին։
Քառասուն կարաս օսկի ունիմ,
Կիտամ յրմեն Կարոս խաչին,
Թրդ ձեռ չիտա իմ խանըմին։
Քառասուն անծին էրինջ ունիմ,
Է՛ն լե կիտամ Կարոս խաչին,
Թրդ ձեռ չիտա իմ ճժկընին։
Քառասուն ղնջիլ բուղա ունիմ,
Է՛ն լե կիտամ Կարոս խաչին,
Թրդ ձեռ չիտա իմ պապեին։
Քառասուն մեծ ճուղ օչխար ունիմ,
Է՛ն լե կիտամ Կարոս խաչին
Թրդ ձեռ չիտա իմ զաղկյին։

Ըսջեն հասալ Կարոս խաչին,
Ջընցալ ըսջեն մրտ Կարոս խաչ։
Հիվին հասալ Կարոս խաչին,
Ջընցալ հիվին մրտ Կարոս խաչ.
Կատղալ Ալին, կատղալ ուր ձին,
Դառնալ կէրալ ուր ձիու ցին,
Կատղալ խանըմ վըր օրոցին,
Կատղալ ճժիկ մրջ օրոցին,
Կատղալ պապեն մրջ թրքնոցին,
Կատղալ զաղեն մրջ ամրոցին։

Օրշնյա՛լ է աստվածըն բարերար,
Օրշնյա՛լ է տերն—Հիսուս-Քրիստոս.
Օրշնյա՛լ է խաչ ու խաչապաշա.
Կարոս՝ խա՛չն է Հայոց աղդին,
Մատա՛ղ էղնիմ Կարոս խաչին։

5. ԿԻՏՈՒՌ

Կիտուռն էկալ էրան-էրան,
Էկալ հասալ Մշու բերան,
Տոչիկ տվին ղկռութ կերան.
Հավա՛ր կիտուռ,
Մատա՛թ կիտուռ,
Ավրի քու տուն,
Դրվի քու դուռ։

Կիտուռ կըսեն յոտներ յերկեն,
Մտալ յարտեր ջերդեն-ջերդեն,
Վախուց փախանք կորդ ու հերկեն.
Հավա՛ր կիտուռ,
Մատա՛թ կիտուռ,
Ավրի քու տուն,
Դրվի քու դուռ։

Կիտուռն էկալ օլոր-մոլոր,
Ջանդակ կանանչ, աչքեր խոլոր,
Բռնեց դաշտի լենք ու բոլոր.
Հավա՛ր կիտուռ,
Մատա՛թ կիտուռ,
Ավրի քու տուն,
Դրվի քու դուռ։

Կիտուռն էկալ՝ ամռան դա էր,
Մարդն ուր գլուխ ի՛մալ պահեր,
Ընդոր՝ հարսնիք, մըղի՝ մահ էր.
Հավա՛ր կիտուռ,
Մատա՛թ կիտուռ,
Ավրի քու տուն,
Դրվի քու դուռ։

Արտեր ունենք կանանչկորուս,
Ցորեն յանկաջն էր թալի դուս,
Էկալ կտրեց ղքոք ու բուս.
Հավա՛ր կիտուռ,
Մատա՛թ կիտուռ,
Ավրի քու տուն,
Դրվի քու դուռ։

Կիտուռն էկալ՝ հետն ուրուտութ,
Լափեց, թափեց քոք ու կռութ,
Մանցինք շիվար, խեղճ ու բռութ.
Հավա՛ր կիտուռ,
Մատա՛թ կիտուռ,
Ավրի քու տուն,
Դրվի քու դուռ։

Տարին էղալ շատ բեռղուր,
Աշնան չէրինք ձավար-բլղուր,
Ցրմեն էրեց աղուր-մղուր.
Հավա՛ր կիտուռ,
Մատա՛թ կիտուռ,
Ավրի քու տուն,
Դրվի քու դուռ։

Նստած դիլենք մենք կծկծուց,
Հալալ օսկոռ, թափալ ուր ծուծ,
Քանդեց, թափեց, բան չը հարցուց.
Հավա՛ր կիտուռ,
Մատա՛թ կիտուռ,
Ավրի քու տուն,
Դրվի քու դուռ։

Վերան դառձանք դաշտ ու արտեն,
Արուն կաթե աչք ու սրտեն,
Թողինք կորինք կիտուու դարդեն.
Հավա՞ր կիտուու,
Մատա՞թ կիտուու,
Ավրի քու տուն,
Դրվի քու դուռ։

Քըվի մեռնիմ սրբ Կարապետ,
Սրբերուց զոր ու զորապետ,
Կիտուռն յընցու, թոթուռն ի հետ.
Հավա՞ր կիտուու,
Մատա՞թ կիտուու,
Ավրի քու տուն,
Դրվի քու դուռ։

6. ՀՈԳԻՆ ՈՒ ՄԱՐՄԻՆ

Հոգին զմարմին խրատեց,
Ըսեց.—Ա՜յ իմ բարի գրկեց,
Օր մե քըզի կուտե սև ցեց,
Յորի՞ն մրմուռ կիտաս ընձի։

Մարմինն ըսեց.—Ա՜յ իմ ախպեր,
Նոր իմ յընկի ախշըրի սեր,
Թըզ զիս փրկե էրկնային տեր,
Ահ ու զարն է բաժին ընձի։

Հոգին ըսեց.—Գաիս օր յիգա՝
Ես կէղնիմ քու մեգքին վկա,
Խոստովանի է՛ն՝ ինչ օր կաս,
Յորի՞ն մրմուռ կիտաս ընձի։

Մարմինն ըսեց.—Հե՜յ վախ ու վա՛խ,
Զըմ դինա իմ մեռնելու դախ,
Օր մե Գաբրել դիկա խոնախ,
Ահ ու զարն է բաժին ընձի։

Հոգին ըսեց.—Հե՜յ, վա՛խ, դինամ,
Դու կը մեռնիս, ես կը մնամ,
Քըլնե դառ լե տի՛ մոմոմամ,
Յորի՞ն մրմուռ կիտաս ընձի։

7. ՄՇԵՑՈՑ ԹՈՒԹՆԻ ԳՈՎՔ

Ջըհել տղա, դրեր ենք ֆաս,
Նստած՝ կէնինք զթութնի բաս,
Մեռնիմ քըզի, նաֆաս մե տաս.
—Յամա՜ն, վա՛ռա ես անթութուն։

Ջարոխ չըկեր, հագեր ենք սոլ,
Թութնի դարդեն յընգեր ենք չոլ,
Քրպու էրթամ թալիմ զիս գոլ.
—Յամա՜ն, վա՛ռա ես անթութուն։

Թաժա յելեր ենք ջոջ պասեն,
Ձեռ չը տարա մածնի քասեն,
Սիրտսի զարկի թութնի թասեն.
—Յամա՜ն, վա՛ռա ես անթութուն։

Գացի հասա չուր Բուլանսուխ,
Ասու սիրուն, տվեք մեկ մուխ,
Նաֆաս մ՝տոնիմ, հանիմ մեկ ծուխ.
—Յամա՜ն, վա՛ռա ես անթութուն։

Թութուն ցանի, տվեր էր փուշ,
Թութնի դարդեն գիս թալի Մուշ,
Ձեռսի չկեր էրկու խուռուշ.
—Յամա՜ն, վա՛ռա ես անթութուն։

Թունդիր չըկեր՝ յողներ կախենք,
Ըսի կինկա գալմեն ծուխենք,
Գիշեր-ցերեկ ախ ու վախ ենք.
—Յամա՜ն, վա՛ռա ես անթութուն։

Ասու սիրուն, հեյրք է մաշիմ,
Դոներ յընգնամ, կոթող գաշիմ,
Ա՜խ, տվեք մեկ նաֆաս քաշիմ.
—Յամա՜ն, վա՛ռա ես անթութուն։

Հաղլո Հակորն իմ Կոփեցի,
Ջիմ էշն առա՝ քաղաք գացի,
Թութուն չէզավ՝ նստա լացի,
—Յամա՜ն, վա՛ռա ես անթութուն։

8. ՄՇԵՑՈՒ ԹՈՒԹՆԻ ԳՈՎԱՍԱՆՔ

1

Արտ ըմ ցանի ուժ ըմ թութուն,
Քամին էկավ տարավ զրիթսեն,
Թուի ըմ չը մնաց տանենք իմ տուն,
Վառ-վառ վառա՛ ես անթութուն։

2

Թութուն չէզավ՝ նստա լացի,
Թութնի դարդեն ընկեր ենք չոլ,
Քրպու զիսի թալեցի զոլ,
Վառ-վառ վառա՛ ես անթութուն։

3

Ջահելութե՜ն, գրեր ին ֆաս,
Նստած՝ կէնին թութունի բաս,
Աստված սիրես՝ տաս մեկ նաֆաս,
Վառ-վառ վառա՛ ես անթութուն։

4

Կորավ մեր սել, յելավ կաչկեն,
Կորավ դամաթ, յելավ պաչկեն,
Թութուն յուհու յընկավ իմ աչքեն,
Վառ-վառ վառա՛ ես անթութուն։

9. ՍՐԲ ԿԱՐԱՊԵՏԻՆ ԳՈՎՔ

Սրբ Կարապետ բանձր ու բոլոր,
Ուր դուռ դիկան շատ ընտավոր,
Ո՛ր ոտավոր, ո՛ր ձիավոր,
Մշու սուլթան սրբ Կարապետ։

Սրբ Կարապետ բանձրաբումպեթ,
Խոսք կը բանա մեր յլմնու հետ,
Էլ չը հարցու մանարիկ ու բեդ,
Մշու սուլթան սրբ Կարապետ։

Սրբ Կարապետ մրջ պրակին,
Ջուխտակ աղբուր մրջ ուր բակին,
Ինոր մատաղ դասն ու մաքին,
Մշու սուլթան սրբ Կարապետ։

Սրբ Կարապետ դաշտն է բոլոր,
Ճամպեք ունի օլոր-մոլոր,
Մինակ կնկաց կիշկև խոլոր,
Մշու սուլթան սրբ Կարապետ։

Սրբ Կարապետ աղբուր ու ջուր,
Ուր դուռ դիկան շատ կաղ ու կուր,
Էրթրցողի մուրազն եատուր՝
Մշու սուլթան սրբ Կարապետ։

Սրբ Կարապետ յելման դեատեր,
Մեջն է բուսի կանանչ խոտեր,
Ուրնե դիկան խնկի հոտեր,
Մշու սուլթան սրբ Կարապետ։

Սրբ Կարապետ չանդլի դիվան,
Քումպեթներ հեսվեն կերնան,
Է՛ն խափանեց չարք ու դիվան,
Մշու սուլթան սրբ Կարապետ։

Սրբ Կարապետ զորավոր խաչ,
Խաչն է օսկի, քարն է կանաչ,
Մարդ կա՞ ինոր չէղնի ճանանչ,
Մշու սուլթան սրբ Կարապետ։

Սրբ Կարապետ մրջ աշխարհին
Փառավորե մարդու հոգին,
Տեր ու փրկիչ Հայոց ազգին՝
Մշու սուլթան սրբ Կարապետ։

10. ՍՈՒՐԲ ԿԻՐԱԿՎԱ ԳՈՎԱՍԱՆՔ

1

Աստված յոթն օր ստեղծմունք էրեց,
Յաուջ ինք պահեց Կիրակին.
Տվեց մրգի, թանքի էրեց,
—Մաքո՛ւր պահեք սուրբ Կիրակին։

2

Ոն ինքն ուրին ճամպա հանե,
Սուրբ Կիրակվան ֆանկանջ չէնե,
Էնի քրնց անօրեն դեն է,
—Մաքո՛ւր պահեք սուրբ Կիրակին։

3

Ոն Կիրակվան արտ կը վարե,
Էնոր գործեր մահուց չար է,
Արքայութենից բեբար է,
—Մաքո՛ւր պահեք սուրբ Կիրակին։

4

Ոն Կիրակվան արտ կը ցաքա,
Ուր մարմրնուն բան կը հոդա,
Մարմինն ողջ է, հոգին տքա,
—Մաքո՛ւր պահեք սուրբ Կիրակին։

5

Ոն Կիրակվան արտ կը քաղա,
Դուշմընին բնաղուն կաղա,
Մարմինն ողջ է, հոգին կաղ ա,
—Մաքո՛ւր պահեք սուրբ Կիրակին։

6

Ոն Կիրակվան սել կը բառնա,
Աստրծու օրենք կը խառնա,
Դժոխքի բաժին կը դառնա,
—Մաքո՛ւր պահեք սուրբ Կիրակին։

7

Ոն Կիրակվան փետ կը տաշե՝
Աստրծու կրակն ղէն կը խաշե,
Մարմինն ողջ է, հոգին մաշ է,
—Մաքո՛ւր պահեք սուրբ Կիրակին։

8

Մեր մեծավոր Լուսավորիչ՝
Գրեր է տրսվերկու պատիճ,
Մարդ կա՝ դիտուն, մարդ կա՝ սչինչ,
—Մաքո՛ւր պահեք սուրբ Կիրակին։

9

Էս աշխարի բանեքն են սուտ,
Ոն օր պահեց զկիրակմուտ՝
Դատաստանին ունի ումուդ,
—Մաքո՛ւր պահեք սուրբ Կիրակին։

10

Աշըղ Միրզոն լե կը մեռնի,
Օր մը Գաբրել հոգին կառնի,
Էս աշխարհ համ քաղցր ու դառն ի,
—Մաքո՛ւր պահեք սուրբ Կիրակին։

11. ՏԻՐԱՄՈՐ ԳՈՎՔ

Քեզ հավատամ, խոստովանիմ,
Անմահական սուրբ Տիրամեր,
Քու տաճարին էրկրպագիմ,
Շատ պատվական սուրբ Տիրամեր։

Քու քումպեթն է շինած բալաք,
Դու էր վրեն՝ հուրի-մալաք,
Վին կը զարկեր՝ կեներ հալաք,
Ջառահ-հեքիմ սուրբ Տիրամեր։

Մրջ ըռախտին քու ձին՝ նրխշ է,
Ձիուդ քամին մարդ կը քշե,
Էնոր զարկած յարեն քըֆշ է,
Ջառահ-հեքիմ սուրբ Տիրամեր։

Գովամ քումպեթ բանձըր սարեն,
Լուս կը բխա մարմար քարեն,
Է՛ն է մըզի փրկի չարեն,
Ջառահ-հեքիմ սուրբ Տիրամեր։

Գովամ զքու օսկի խաչեր,
Քու դուռ գիկան մատաղ խոշեր,
Ըխտավորներ՝ ճերմակ մանչեր,
Ջառահ-հեքիմ սուրբ Տիրամեր։

Գովամ զքու նըխշուն յոդեն,
Ձրմ հեռանա ես քու մոտեն,
Ձըմ կշտանա անուշ հոտեն,
Ջառահ-հեքիմ սուրբ Տիրամեր։

Խոյլի Վարդան գովաց քըզի,
Դո՛ւ էր շնորք տվի մըզի,
Թըղ պահապան էղնի ձըղի՝
Ջառահ-հեքիմ սուրբ Տիրամեր։